ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

« ՇՀԱՇՁԲ-15/7-ՀՀՔԿԴ-16/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար մեդալների և կրծքանշանների պատրաստման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02.03.2016թ. ժամը 10-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա. Հովսեփյան, Վ. Հարությունյանը, Վ.Մկրտչյանը, Ա. Հակոբյանը, քարտուղար Մ.Մուրադյանը և «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ ներկայացուցիչ՝ լիազորված անձ Աղասի Պողոսյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՇՀԱՇՁԲ-15/7-ՀՀՔԿԴ-16/1» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ (ք. Երևան, Արշակունյաց 12)

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 02.03.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակցի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/
		«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ
1	«Պատվավոր քննիչ» կրծքանշան	266250*
2	«Հավատարմության համար» մեդալ	199375
3	«Անձնվիրություն և անվեհերություն» մեդալ	292417
4	«Վաստակի համար» մեդալ	255375
5	«Անբասիր ծառայության համար» մեդալ	491833
6	«Համագործակցության համար» մեդալ	160792
7	Մեդալների և կրծքանշանների տուփեր	297917

* Հաշվի առնելով, որ «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ -ն գնային առաջարկը 1-ին չափաբաժնի մասով գերազանցում էր այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի ա) պարբերությունը, անհրաժեշտություն առաջացավ վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ: Բանակցությունների արդյունքում 1-ին չափաբաժնի ընդհանուր գինը կազմեց 258300(առանց ԱԱՀ-ի) ՀՀ դրամ:

5. Տեղեկություններ հարավերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

- հարցումներ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1-7 չափաբաժինների համար «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ -ին:

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 15.00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ՖՆ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը;

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Հովսեփյան

_____ Վ. Հարությունյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Ա. Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

Լիազորված անձ՝ _____ Աղասի Պողոսյան